ՀԱՅԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ԱԻ)

ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1916-1946 ԹԹ.)

Ենթամանդատային կարգավիճակ ունեցող Մերձավոր Արևելքի արաբական երկրների անկախություն ձեռք բերելու և անկախ պետականության կայացման գործում չափազանց մեծ է եղել բանակի դերը: Սիրիայում բանակաշինության գործընթացը սկսվել է մի ժամանակաշրջանում, երբ ֆրանսիական մանդատային համակարգը հասնում էր իր ավարտին, և երկիրը ձեռք էր բերում անկախություն: Ինչպես գաղութատիրությունից ազատություն ձեռք բերած ցանկացած երկրում, այնպես էլ Սիրիայում, ազատության ու անկախության կարևորագույն երաշխավոր հանդիսացող բանակի ստեղծման ու կայացման գործընթացը տեղի էր ունենում երկունքի գալարումներով: Եվ միայն կենսունակությամբ օժտված ժողովրդի աջակցությամբ է, որ հնարավոր է լինում ստեղծել հայրենիքն ու հայրենի հողը պաշտպանելու ունակ և այդ ներշնչանքներով տարված խանդավառ ու մարտունակ բանակ:

Սիրիական բանակը ձևավորման սկզբնական շրջանում հիմնականում համալրվում էր ծայրամասային, առանձին դեպքերում նաև սոցիալապես ոչ զարգացած շրջանների էթնիկ և դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներից (ալավիներ, դրուզներ, իսմայիլականներ, քրդեր, չերքեզներ, հայեր և այլք), ովքեր բանակային ծառայությամբ նպատակ էին հետապնդում բարելավել իրենց սոցիալ-տնտեսական վիճակը, ինչպես նաև ապահովել զինվորական գործունեության առաջընթացը: Այս միտումն, ընդհանուր առմամբ, շարունակվեց նաև հետագայում՝ մեծացնելով երկրում փոքրամասնությունների կշիռը: Հատկանշական է, որ բանակն ինչպես նշված ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում կարևոր դերակատա-

րություն է ունեցել ոչ միայն Սիրիայի ներքին կյանքում, այլև նպաստել է մերձավորարևելյան տարածաշրջանում Սիրիայի քաղաքական կշռի մեծացմանը:

Սիրիայի բանակի կազմավորման բուն գործընթացը սկսվել է երկու համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում, որի հիմքն Արևելյան (Հայկական) լեգեոնի Սիրիական գումարտակն է: 1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպանատանը հայերի կամավորագրության հարցի շուրջ բանակցություններ սկսվեցին: Դեսպանատան խորհրդակցությանը մասնակցում էին անգլիական կառավարության ներկայացուցիչ Մարկ Սայքսը, ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Ժորժ Պիկոն և Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարը: Նրանք համաձայնության եկան, որ հայ և սիրիացի կամավորները մասնակցելու են Թուրքիայի դեմ մղվող կռիվներին Սիրիայում, Պաղեստինում ու Փոքր Ասիայում, իսկ հաղթանակից հետո Կիլիկիայում հաստատվելու է հայկական ինքնավարություն: Սիրիացիները ևս ցանկանում էին կռվել թուրքերի դեմ, այդ իսկ պատճառով բարձրաստիճան զինվորական հրավիրվեց՝ ուսումնասիրելու Եգիպտոսում, Ֆրանսիայում և Ամերիկայում բնակվող սիրիացիների հավանական մասնակցության հարցը[1]:

1916 թ. նոյեմբերի 15-ին նախարարական որոշումով ստեղծվեց կամավորների գունդը[2]: 1916 թ. նոյեմբերի 26-ին ֆրանսիական կառավարությունը 7966-9/11 հրամանագրով հաստատեց պատերազմական նախարարության կողմից պատրաստված Արևելյան լեգեոնի կանոնադրությունը: Արևելյան լեգեոն կարող էին կամավորագրվել միայն հայ, սիրիացի և արաբ կամավորներ, որոնք պետք է մարզվեին

---

[1] Պողոսեան Ս., Պողոս Նուբար Փաշա. ազգային գործիչը, Երևան, 2004, էջ 110-114:

[2] Գարամանուկեան Ա., Հայկական Լեգէոնը պատմական, իրաւական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Հայկազեան Հայագիտական Հանդէս, հ. Ե, Պէյրութ, 1974, էջ 41-42:

ու ղեկավարվեին ֆրանսիացի սպաների և ենթասպաների կողմից: Լեգեոնի զինավարժություններն անցկացվելու էին Կիպրոս կղզում[3]: Արևելյան լեգեոնի գումարտակները, որոնք կազմված էին հայերից և սիրիացիներից, մարտական պատրաստականության բերվեցին Կիպրոսում և պատրաստ էին ռազմաճակատ մեկնելու համար: 1918 թ. սեպտեմբերի 19-ին ռազմաճակատի կենտրոնական երեք հատվածներից միաժամանակ հարձակում սկսվեց[4]: Արևելյան լեգեոնը գրոհեց Ռաֆաթի բարձունքը, ալժիրական գումարտակները՝ Քաֆր-Քասիմի, իսկ հնդկականները՝ Արարայի[5]: Արևելյան լեգեոնը փայլուն մասնակցություն ցուցաբերեց այդ գրոհին: Դրանից հետո այն մասնակցեց Սիրիայի բազմաթիվ քաղաքների ազատագրմանը, այնուհետև լեգեոնականներին տեղափոխեցին Բեյրութ, հետո՝ Կիլիկիա[6]:

Արևելյան լեգեոնը, որը բաղկացած էր հինգ գումարտակներից, 1919 թ. հունվարի 18-ին բաժանվեց երկու մասի՝ Հայկական լեգեոնը 4 գումարտակով և Սիրիականը՝ 1 գումարտակով: Արևելյան լեգեոնի կամավորների թիվը հասնում էր շուրջ 5 հազարի՝ հայկական գումարտակներում կար 4124 զինվոր, իսկ սիրիականում՝ 698[7]: Աստիճանաբար Հայկական լեգեոնի չորս գումարտակները մեկի իջան, և 1920 թ. մայիսի 1-ին Բեյրութից ստացվեց վերջին գումարտակի զորացրման հրամանը: Զորացրումը սկսվեց սեպտեմբերի 1-ին: Ամբողջական կերպով այն ավարտվեց նույն ամսվա 27-ին:

Դեռևս 1919 թ. փետրվարին ապստամբեցին Սիրիական լեգեոնի արաբ զինվորները, մարտին ապստամբություն բռնկվեց Հալեպում և նրա շրջակայքում: Նույն թվականի մայիսին Լաթաքիայի շրջանում

---

[3] Պոյաճեան Տ., Հայկական լէգէոնը, Ուօթրթաուն, 1965, էջ 9-12:

[4] Gautherot G., La France en Syrie et en Cilicie, Librairie Independante, 1920, p. 41-42.

[5] Թոփուզյան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946 թթ.), Երևան, 1986, էջ 132-140:

[6] Դևրիկյան Տ., Հայկական Լեգեոնը, Պաշտպանության նախարարություն, Երևան, 2005, էջ 16:

[7] Bou-Nacklie N. E., Les Troupes Spe°ciales: Religious and ethnic recruitment 1916-1946, International Journal of Middle East Studies, Vol. 25, №4, 1993, p. 648.

սկսվեց ալավիների ապստամբությունը Սալիհ Ալ-Ալիի գլխավորությամբ և այլն: Սիրիական գլխավոր կոնգրեսը 1919 թ. դիմեց ողջ սիրիական ժողովրդին զավթիչներին դիմադրություն ցույց տալու կոչով: Ստեղծվեց Ազգային պաշտպանության ժողովրդական խորհուրդ, որը 1919 թ. նոյեմբերի 18-ին որոշեց, որ յուրաքանչյուր սիրիացի պարտավոր է իր ունեցվածքի երկու տոկոսը հատկացնել հայրենիքի պաշտպանության ֆոնդին: Սիրիական կոնգրեսն արաբ ազգը հայտարարեց «օրինակ պաշտպանության վիճակում», իսկ սիրիական կառավարությունը 1919 թ. դեկտեմբերի 21-ին որոշում ընդունեց ընդհանուր զինապարտության մասին, որով զորակոչման էին ենթարկվում 20-40 տարեկան բոլոր քաղաքացիները[8]:

1920 թ. մայիսի 3-ին Ֆեյսալ[9] թագավորը նոր կառավարություն կազմելը հանձնարարեց Սիրիական ազգային կոնգրեսի նախագահ Հաշիմ Ալ-Աթասիին: Նրա գլխավորած կառավարությունը կոչվեց Ազգային պաշտպանության կառավարություն: Ժողովուրդը պահանջում էր կառավարությունից՝ կտրուկ միջոցների դիմել Սիրիայի պաշտպանությունն ամրապնդելու ուղղությամբ: Ի կատարումն այդ պահանջի՝ կառավարությունը որոշեց անհապաղ ձեռնամուխ լինել ազգային բանակի կազմակերպմանը: Հենվելով 1919 թ. դեկտեմբերին ընդունված զինապարտության մասին օրենքի վրա՝ Հաշիմ Ալ-Աթասիի կառավարությունը սկսեց զորահավաք և ազգային բանակի զորամիավորումների կազմակերպում: Ֆրանսիական կառավարությունը Սիրիային ներկայացրեց վերջնագրի բնույթ կրող հինգ կետից կազմված իր պահանջները, որը 1920 թ. հուլիսի 14-ին Ֆեյսալին հանձնեց գեներալ Գուրոն: Ֆեյսալը ցրեց Սիրիական գլխավոր կոնգրեսը, ձեռնամուխ եղավ ազգային բանակի զինաթափմանը և զորացրմանը, անգամ սկսեց ճնշել ժողովրդական ելույթները: Հուլիսի 21-ին հայտնի դարձավ, որ ֆրանսիական զորքերը շարժվում են դեպի Դամասկոս:

---

[8] Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975, էջ 73-76:

[9] Էմիր Ֆեյսալը (1883-1933) Հիջազի շերիֆ Հուսեյնի երրորդ որդին էր:

Ֆեյսալը երկրի պաշտպանության հրաման արձակեց: Սիրիական կամավորների թիվը հասնում էր 4-5 հազարի: Մայսալուն եկան նաև սիրիական կանոնավոր բանակի փոքր զորախմբեր Սիրիայի պաշտպանության նախարար Յուսեֆ Ազմայի գլխավորությամբ, որոնք չէին հասցրել զորացրվել սիրիական բանակը ցրելու վերաբերյալ Ֆեյսալի արձակած օրենքից հետո: Հուլիսի 26-ին ֆրանսիական գեներալ Գոյբետը սիրիական կառավարության անդամների հետ հանդիպման ժամանակ Սիրիայում տեղի ունեցած դեպքերի համար մեղադրեց Ֆեյսալին և ֆրանսիական կառավարության անունից պահանջեց գահընկեց անել նրան, վճարել ռազմատուգանք, ցրել սիրիական բանակը և այն վերածել ոստիկանության, ֆրանսիական բանակին հանձնել նրա բոլոր զենքերը և զինամթերքը[10]:

Սիրիական լեգեոնի թվակազմն ավելացնելու նպատակով՝ ֆրանսիացիներն այն համալրեցին ազգային, կրոնական փոքրամասնություններով: Սիրիական լեգեոնի Առաջին գնդի հրամանատարը փոխգնդապետ Լանդաիսն էր[11]: Առաջին գնդի մեջ էր մտնում ալավիների շրջանը[12]: 1924 թ. լեգեոնը բաղկացած էր 6500 հոգուց՝ 137 ֆրանսիացի և 48 տեղացի սպաներով, ովքեր ռազմական ուսում էին ստանում Դամասկոսի Ռազմական ակադեմիայում[13], որը ստեղծվել էր 1920 թ.: Միայն 1932 թ. այդ ուսումնարանը տեղափոխվեց Հոմս և պատմագրության մեջ հայտնի է որպես Հոմսի Ռազմական ակադեմիա:

1925 թ. ֆրանսիացիները հիմնեցին այսպես կոչված «Լրացուցիչ զորքեր» (Troupes Supple´tives), որոնք բաղկացած էին գյուղական և շարժական զորքերից, ինչպես նաև ժանդարմերիայից: Մինչ այդ էլ

---

[10] Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 95-106:

[11] Bou-Nacklie N. E., նշվ. աշխ., էջ 659:

[12] Սիրիայի տարածքի վրա ֆրանսիական մանդատի ներքո ստեղծվեցին հինգ պետություն՝ Լիբանանի, Դամասկոսի, Հալեպի, Ալավիների և Ջաբալ Դրուզի, ու Ալեքսանդրետի ինքնավար մարզը: Տե՛ս Hourani A. H., Syria and Lebanon, A Political Essay, Oxford University Press, 1946, p. 172-173.

[13] Khoury P. S., Syria and the French mandate, The politics of Arab Nationalism 1920-1945, London 1987, p. 80.

նրանք հիմնել էին նաև «Օժանդակ զորքեր» (Troupes Auxiliaires), որոնք հիմնականում կազմված էին Ալ-Բաշաղիրա ալավիներից (նուսայրիներ), Թուրշան դրուզներից, չերքեզներից, հայերից և քրդերից[14]: Նրանք զինվորական ծառայության համար որպես աշխատավարձ սկզբում ստանում էին հինգ, իսկ ծառայությունից վեց ամիս անց՝ 13 լիրա[15]:

1925 թ. հուլիսին Սուլթան Ալ-Աթրաշի գլխավորությամբ Ջաբալ Դրուզում սկսված ապստամբության ժամանակ ֆրանսիական հրամանատարությունը 3-4 հազար օժանդակ զորքեր ուղարկեց, որոնց մեջ մտնում էին սենեգալցիների 2 վաշտ, մադագասկարցիների 2 վաշտ, Մարոկկոյի և Թունիսի արաբների 2 հեծելավաշտ, սիրիացիների 5 վաշտ, որոնք մեծ մասամբ կազմված էին չերքեզներից և քրդերից: Այդ ուժերի մեջ մտնում էին նաև ֆրանսիական 5 հրաձգային վաշտ, զրահապատ մեքենաների 2 հեծելավաշտ, լեռնային հրետանու 1 մարտկոց, 2 հրետանային դասակ և այլն[16]:

1926 թ. Սիրիական լեգեոնը բաղկացած էր մոտ 10 հազար չերքեզից, 4 հազար ալավիից և իսմայիլականից, 1500 եզդիից, 1500 բեդվինից, 2 հազար դրուզից և հայից: Այդ զորքերի կողքին ստեղծվեցին մի քանի կազմակերպություններ Հալեպում և Ջազիրայում: Այլ քաղաքներում նմանատիպ կազմակերպություններ նույնպես ստեղծվեցին տարբեր կրոնական անվանումներով: Այդ կազմակերպություններին ֆինանսավորում, զենք ու զինամթերք էր տրամադրում ֆրանսիական «Հակահետախուզական սպաների կոմիտեն», որը գործում էր Սիրիայում: Հաճախ ընդհարումներ էին տեղի ունենում այդ կազմակերպությունների և հասարակության միջև, որոնք հրահրում էին ֆրանսիացիները: «Հակահետախուզական սպաների կոմիտեն» այնպիսի մթնոլորտ էր ստեղծում Սիրիայում, իբր հասարակութ-

---

[14] Drysdale A. D., Center and Periphery in Syria: A political geographic study, Ph.D Diss., The University of Michigan, 1977, p. 78.
[15] Ганич А. А., Черкесы в Иордании, МГУ ИСАА, Москва, 2007, с. 89.
[16] Луцкий В., Национально-освободительная война в Сирии (1925-1927 гг.), Москва, 1964, с. 159.

յունը վտանգի մեջ է գտնվում, և առանց ֆրանսիացիների ներկայության՝ արյունալի բախումներ տեղի կունենան սիրիացիների միջև[17]: Այսպիսի քաղաքականությունը ազգային, կրոնական թշնամություն առաջ բերելու նպատակով էր արվում, որպեսզի ազգային-ազատագրական ուժերի շարքերում վարկաբեկվեր ու թուլանար ազգային անկախության պայքարը, ազգային ապստամբությունը վերածվեր կրոնական պատերազմի և համաշխարհային հասարակությանը ցույց տրվեր, որ կրոնական հակամարտություններով պառակտված Սիրիան ֆրանսիական խնամակալության կարիքն ունի:

Թեև ֆրանսիական իշխանությունները կրճատեցին ալավիների, դամասկոսյան սուննի արաբների, դրուզների թվակազմը Սիրիական լեգեոնում, այնուամենայնիվ, նրանցից բոլորը ապստամբեցին նրաց դեմ 1920-1927 թթ.: Ընդհանուր առմամբ՝ ալավիների, սուննի արաբների, դրուզների պատկերը չփոքրացավ զինված ուժերում:

1930 թ. մարտի 20-ին Սիրիական լեգեոնը, որին միացան նաև Լրացուցիչ և Օժանդակ զորքերը, վերածվեց «Լևանտի Հատուկ Զորամասերի» (Troupes SpՈciales du Levant)[18]: Ֆրանսիական մանդատային իշխանությունների ստեղծած «Հատուկ զորամասերը» համալրվում էին հիմնականում ծայրամասային հետամնաց շրջանների, ինչպես նաև ազգային, կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչներից, օրինակ՝ ալավիներ, դրուզներ, իսմայիլականներ, քրդեր, չերքեզներ, հայեր և այլն[19]: Թեպետ 1930-1945 թթ. հայերի թվակազմն ավելացավ «Հատուկ զորամասերում», որոնցից շատերը նշանակվեցին տեխնիկական բաժնում, այնուամենայնիվ, Արևելյան (Հայկական) լեգեոնը չվերածնվեց:

---

[17] Салах ад-Дин Мунла Али, Социально-политическое развитие Сирии (1918-1939 гг.), Диссертация, Университет Дружбы Народов имини Патриса Лумумбы, Москва, 1983, с. 93-94.

[18] Bou-Nacklie N. E., նշվ. աշխ., էջ 651:

[19] Be'eri E., Army Officers in Arab Politics and Society, Israel Universities Press, Jerusalem, 1969, p. 334; Van Dam N., Middle Eastern political clichés: «Takriti» and «Sunni rule» in Iraq, «Alawi rule» in Syria, Orient, 21 Jahrgang, German Journal for Politics and Economics of the Middle East, Nr. 1, Januar, 1980, p. 51-52.

«Հատուկ զորամասերը» բաղկացած էին չերքեզների 8, լիբանանցիների 7, դրուզների 6, քրդերի 3, հաուրանցիների 1 հեծելավաշտերից, ինչպես նաև այլ ներկայացուցիչների 4 հեծելավաշտից: «Հատուկ զորամասերի» հրամանատարն էր կապիտան Կոլլը[20]: Չերքեզական գնդի առաջին հրամանատարն Օսման Աբեյն էր, այնուհետև՝ Թաուֆիկ Անզորը[21]:

1936 թ. սեպտեմբերի 9-ին Սիրիայի և Ֆրանսիայի միջև ստորագրվեց «Բարեկամության և օգնության պայմանագիրը»: Ֆրանսիան ճանաչում էր Սիրիայի անկախությունը և պարտավորվում էր երեք տարվա ընթացքում՝ մինչև 1939 թ., հրաժարվել մանդատից և օժանդակել Սիրիային՝ որպես անկախ պետություն անդամակցելու Ազգերի լիգային: Ֆրանսիան ճանաչում էր նաև Սիրիայի միասնությունը, ըստ որի՝ Լաթաքիան և Ջաբալ Դրուզը միավորվում էին Սիրիային: Դրա հետ միասին Ֆրանսիան իրավունք էր ստանում Սիրիայի տարածքում ունենալ իր ռազմական բազաները, իսկ Լաթաքիայի և Ջաբալ Դրուզի շրջաններում հինգ տարի ժամանակով պահելու իր զորքերը: Ֆրանսիական ռազմական ուժերը կարող էին ազատ շարժվել Սիրիայի տարածքով, իսկ ռազմանավերը՝ մտնել Սիրիայի ցանկացած նավահանգիստը: Ֆրանսիական ռազմական առաքելությունն իրավունք էր ստանում հսկել սիրիական բանակը, որը պետք է բաղկացած լիներ միայն մեկական հետևակային և հեծելազորային դիվիզիաներից: Պատերազմի դեպքում Ֆրանսիան կարող էր օգտվել սիրիական բազաներից, նավահանգիստներից, հաղորդակցության ճանապարհներից: Սիրիան պարտավորվում էր միայն Ֆրանսիայից հրավիրել ռազմական խորհրդականներ և այլ մասնագետներ: Սիրիան՝ համաձայն պայմանագրի պահանջների, ձեռնամուխ եղավ պայմանագրի վավերացմանը: 1936 թ. նոյեմբերի

---

[20] Кушхабиев А. В., Черкесская диаспора в Арабских странах (19-20 вв.), Нальчик, 1997, с. 133.

[21] Бадерхан Фасих, Северокавказская диаспора в Турции, Сирии и Иордании, Москва, 2001, с. 75.

30-ին կայացան սիրիական խորհրդարանի նոր ընտրություններ, որի ժամանակ հաղթեց «Ազգային դաշինք» կամ «Ալ-Քութլաթ Ալ-Վատանիան»[22]: Նրա ղեկավար Հաշիմ Ալ-Աթասին ընտրվեց Սիրիայի նախագահ, իսկ Ջամիլ Մարդամը գլխավորեց սիրիական կառավարությունը: Ֆրանսիական խորհրդարանը 1939 թ. հունվարին հրաժարվեց վավերացնել 1936 թ. ֆրանս-սիրիական պայմանագիրը: Լաթաքիան և Ջաբալ Դրուզը նորից անջատվեցին Սիրիայից: Ֆրանսիական կառավարության 1939 թ. սեպտեմբերի 2-ի որոշմամբ՝ Սիրիան հայտարարվեց ռազմական գոտի, և այնտեղ ուղարկվեցին նոր ռազմական միավորումներ: Ոստիկանությունը և անվտանգության ուժերը դրվեցին բանակի հսկողության տակ[23]:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիների օրեցօր հզորացող ազգային-ազատագրական շարժման պայմաններում 1943 թ. օգոստոսի 17-ին տեղի ունեցավ Սիրիայի Ազգային ժողովի նոր ընտրություններ[24]: Նորընտիր Խորհրդարանը Սիրիայի նախագահ ընտրեց «Ալ-Քութլաթ Ալ-Վատանիա» կուսակցության առաջնորդ Շուքրի Ալ-Քուաթլիին[25]: Ֆարիս Ալ-Խուրին ընտրվեց Ազգային ժողովի նախագահ, իսկ օգոստոսի 19-ին կազմվեց ազգային առաջին կառավարությունը, որը ղեկավարեց Սաադալլահ Ալ-Ջաբրին[26]:

Ֆրանսիան, Սիրիային փոխանցելով երկրի կառավարման որոշ պարտականություններ, իր տնօրինության տակ պահեց «Հատուկ զորամասերը»: Սիրիական կառավարությունը պաշտոնապես Ֆրանսիայի առջև դրեց «Հատուկ զորամասերն» իրեն հանձնելու պահանջը: Այդ զորամասերը Սիրիային փոխանցելու համար բանակցությունները

---

[22] «Ազգային դաշինք» կուսակցության մասին մանրամասն տե՛ս Seale P., The Struggle for Syria. A Study of Post-War Arab Politics (1945-1958), London, 1965, p. 24.

[23] Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 177-194:

[24] سلمى مردم بك، أوراق جميل مردم بك، استقلال سورية 1945 -1939، بيروت، 1994، صفحة 233.

[25] Winder Bayly R., Syrian deputies and cabinet ministers 1919-1959, Part 1, Middle East Journal, Vol. 16, № 4, 1962, p. 414.

[26] أحمد الجندي، زكرى الجابري، دمشق، بناء دار المهندسين، صفحة 13- 12.

սկսվել էին դեռևս 1943 թ. դեկտեմբերին և ընդմիջումով շարունակվել հաջորդ երկու տարիներին[27]:

«Ալ-ինշա» թերթը նշում էր, որ երկրի անկախությունը պահպանել կարելի է միայն ազգային բանակի առկայության դեպքում, իսկ «Ալ-քիֆահը» կառավարությանն առաջարկում էր՝ անհապաղ ձեռնամուխ լինել ազգային բանակի ստեղծմանը: Նա միաժամանակ առաջարկում էր մի խումբ երիտասարդների ուղարկել արաբական երկրներ ռազմական կրթություն ստանալու համար: Բանակի ստեղծման ու ռազմական կադրերի պատրաստման հետ մեկտեղ առաջ էր քաշվում նաև հատուկ ռազմական հարկ մտցնելու պահանջը: Կառավարությանը ներկայացվեց մի պահանջագիր, ուր առաջարկվում էր՝ մտցնել ընդհանուր զինապարտություն, ուսուցանել ռազմական գործը բոլոր դպրոցներում, սահմանել հայրենիքի Բանակի օր և նվիրատվություններ հավաքել՝ ի նպաստ բանակի[28]:

Սիրիական կառավարությունը գործնական քայլերի դիմեց ազգային բանակ ստեղծելու ուղղությամբ: Այդ նպատակով մի խումբ երիտասարդներ ուղարկվեցին արաբական երկրներ ռազմական կրթություն ստանալու համար: Բանակի ստեղծման և ռազմական կադրերի պատրաստման հետ միասին քննարկվում էր նաև ռազմական հատուկ հարկ մտցնելու պայմանը: Սիրիայի կառավարությունը որոշեց բյուջեում անհրաժեշտ ֆինանսական հատկացումներ կատարել նոր բանակ ստեղծելու համար: 1945 թ. մայիսի 19-ին Սիրիան օրենք ընդունեց ազգային պաշտպանության մասին, որը կառավարությանն իրավունք էր տալիս զորահավաք կատարել, նախատեսում էր երկրի պաշտպանության միջոցների կազմակերպում և ազգային սպայական կազմի կազմավորում: Օրենքում հատուկ նշված էր, որ սիրիական բանակի սպայական կազմում ոչ մի օտարերկրյա մասնագետ չպետք է լինի: Անհրաժեշտության դեպքում այդ մասնագետ-

---

[27] Пир-Будагова Э. П., Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945-1966 гг.), Москва, 1978, с. 18.

[28] Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 264:

ները կարող էին հրավիրվել արաբական մյուս երկրներից: Երկրի պաշտպանունակությունն ամրապնդելու ուղղությամբ սիրիական կառավարությունը կամավորների ցուցակագրում թույլատրեց, ինչպես նաև ամրապնդեց ոստիկանական ուժերը, որոնք տվյալ պահին երկրում միակ զինված ուժերն էին[29]:

Սիրիայի և Լիբանանի ԱԳ նախարարների միջև կայացած հանդիպման ժամանակ որոշվեց դիմել ԱՊԼ-ին՝ խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով: Նրանք ակնկալում էին, որ անկախության համար մղված այդ պայքարը կնպաստի նաև արաբական երկրների համերաշխության ամրապնդմանը[30]:

Սիրիայի ազգային ուժերի, ինչպես նաև համաշխարհային հանրության ճնշման ներքո Ֆրանսիան 1945 թ. հուլիսի 8-ին պաշտոնապես հայտնեց, որ համաձայն է 45 օրվա ընթացքում Սիրիային ու Լիբանանին հանձնել «Հատուկ զորամասերը»: Այդ նպատակով ստեղծվեց տեխնիկական հանձնաժողով և հուլիսի 20-ին ավարտելով նախապատրաստական բոլոր աշխատանքները՝ սկսվեց զորքերի փոխանցումը: Այն ամբողջությամբ ավարտվեց 1945 թ. օգոստոսի 1-ին[31]: Այդ ժամանակվանից սկսած՝ օգոստոսի 1-ը Սիրիայում նշվում է որպես Բանակի օր[32]:

1945 թ. օգոստոսի 14-ին հրապարակվեց համար 190 օրենքը, որով նախատեսվում էր պաշտպանության նախարարության ստեղծումը[33]: Այնուհետև զինված ուժերն արդեն բաժանված էին ոստիկանական և ժանդարմական ուժերի: Բանակը հաշվվում էր հինգ

---

[29] Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 275-276:

[30] Կարամանուկյան Շ. Լ., Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, էջ 52:

[31] مصطفى طلاس، تاريخ الجيش العربي السوري، الجلد الأول، 1901-1948، مركز الدراسات العسكرية، صفحة 197.

[32] Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, Middle East Review of International Affairs, Vol. 5, № 1, March, 2001, p. 3.

[33] Аднан ибн Исмаил Махлуф, Специальные войска Вооруженных Сил Сирийской Арабской Республики, Генеральный Штаб ВС САР, Диссертация, Дамаск, 1990, с. 20.

հազար հոգի, իսկ ոստիկանությունը՝ 3500: Սիրիայի բանակի կազմավորումը սիրիացիների հաղթանակն էր, որը պաշտպանում էր հարազատ հողն ու իր շահերը: Սիրիական բանակը մի «կաթսա» էր, որտեղ ձուլվում էին հասարակության տարբեր շերտեր, այդ թվում էթնիկ և դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Սիրիայից ֆրանսիական ու անգլիական զորքերի դուրս բերումը սկսվեց 1946 թ. ապրիլի 15-ի առավոտյան ժամը 9-ին և վերջնականապես ավարտվեց ապրիլի 17-ին[34]: Այդ օրը Սիրիայում համարվում է ազգային տոն: 1946 թ. ապրիլի 17-ին տեղի ունեցավ սիրիական բանակի զորահանդես, որն ընդունեց Սիրիայի նախագահ Շուքրի Ալ-Քուաթլին:

Ինչպես արաբական մյուս երկրներում, այնպես էլ Սիրիայում, բանակը ոչ միայն պետական, այլ նաև քաղաքական ինստիտուտի դեր ունեցավ: Անկախության հռչակումից հետո Սիրիայի բանակի բարձրագույն խավն իր մեջ ներառում էր յոթ պաշտոններ՝ շտաբի պետ, շտաբի պետի առաջին օգնական, շտաբի պետի երկրորդ օգնական, Ջ-1 (անձնակազմ, սպաներ և զորքեր), Ջ-2 (անվտանգություն), Ջ-3 (գործողություններ և ուսուցում), Ջ-4 (վարչություն): Սիրիայի բանակի սպայական կազմը Մայքլ Վան Դուզենը բաժանում է 4 դասի: Այն սպաները, ովքեր ծառայության են մտել մինչև 1926 թ., պատկանում են առաջին դասին, 1926-1935 թթ. ներկայացնում են երկրորդ դասը, 1935-1946 թթ. երրորդը և չորրորդ սերունդը՝ 1946 թ.-ից հետո[35]:

Անկախության ձեռքբերումից հետո սիրիական բանակի սպայական վերնախավը հավաքագրված էր քաղաքային ապահովված ընտանիքներից: Առաջին հերթին դա վերաբերում էր բարձրագույն սպայական կազմին, որը ներկայացված էր «հիսուն ընտանիքներով»:

Սիրիայի բանակի սպայական կազմի ականավոր ընտանիքներից էր Դամասկոսի Մարդամ ընտանիքը, որը երկրին տվել է

---

[34] احسان هندي، كفاح الشعب العربى سوري، 1948- 1908، دمشق، 1962، صفحة 182.

[35] Van Dusen M., Intra-and Inter-Generational Conflict in the Syrian Army, Ph.D Diss., Johns Hopkins University, Baltimore, Maryland, 1971, p. 43-50, 114, 375-414.

վարչապետ, ինչպես նաև մի քանի բարձրաստիճան սպաներ: Աբդ Առ-Ռահման Մարդամը Հուսնի Ազ-Զաիմի[36] ղեկավարման շրջանում ուներ գնդապետի աստիճան, իսկ ավելի ուշ՝ գեներալ-լեյտենանտի: Թաուֆիկ Նիզամ Ադ-Դինը, ով 1956 թ. հուլիսից մինչև 1957 թ. օգոստոսը շտաբի պետ էր, Կամիշլիի ամենահայտնի ընտանիքներից էր[37]: Հոմսի Ալ-Աթասի ընտանիքից Սիրիան ունեցել է երկու նախագահ՝ Հաշիմ Ալ-Աթասին և Նուր Ադ-Դին Ալ-Աթասին և ավելի քան տասը սպա, այդ թվում՝ Ֆեյսալ Ալ-Աթասին, ով 1954 թ. Ադիբ Աշ-Շիշակլիի[38] դեմ մղված պայքարի ղեկավարներից էր, Ջաուդաթ Ալ-Աթասին, ով ոստիկանության ավագ սպա էր, իսկ հետագայում Մոսկվայում դեսպան նշանակվեց և Լուայ Ալ-Աթասին[39]: Սիրիական բանակում սպաները ստանում էին 500-1500 սիրիական լիրա, իսկ, օրինակ, դպրոցի ուսուցիչը՝ 105-180 սիրիական լիրա:

---

[36] Հուսնի Ազ-Զաիմը պատկանում է սիրիական սպայական կազմի առաջին դասին: Նա ծնվել է 1889 թ. Հալեպում և քրդական ծագում ունի: Վերջինս ծառայել էր թուրքական բանակում և ավարտել Ստամբուլի ռազմական ակադեմիան, այնուհետև ծառայության էր անցել «Հատուկ զորամասերում»: 1941 թ.՝ անգլիական և Ազատ Ֆրանսիայի զորքերի Սիրիա մտնելուց հետո, Հուսնի Ազ-Զաիմը ձերբակալվեց, այնուհետև կրկին ծառայության անցավ սիրիական բանակում՝ հասնելով մինչև սիրիական բանակի շտաբի պետի պաշտոնին:

[37] Թաուֆիկ Նիզամ Ադ-Դինը ծնվել է 1911 թ. Կամիշլիում: 1934 թ. նա ավարտել է Հոմսի Ռազմական ակադեմիան և պատկանում է սիրիական սպայական կազմի երկրորդ դասին:

[38] Ադիբ Աշ-Շիշակլին պատկանում է սիրիական սպայական կազմի երկրորդ դասին: Նա ծնվել է 1909 թ. Համայում և նույնպես քրդական ծագում ունի: 1930 թ. նա ծառայել է «Հատուկ զորամասերում», իսկ 1945 թ. Մասնակցել է Սիրիայի անկախության համար մղված պայքարում: Երիտասարդ տարիքում Աշ-Շիշակլին Սիրիական Ազգային սոցիալական կուսակցության անդամ էր, սակայն հետագայում դուրս եկավ կուսակցությունից: 1951 թ. մայիսին նա դարձավ սիրիական բանակի շտաբի պետ:

[39] Լուայ Ալ-Աթասին ծնվել է 1926 թ., ավարտել է Հոմսի Ռազմական ակադեմիան: 1962 թ. Հալեպի կայազորի հրամանատարն է եղել, իսկ 1962-1963 թթ. ԱՄՆ-ում Սիրիայի ռազմական կցորդը:

Սպայական վերնախավի 3-րդ և 4-րդ սերնդից էր Աֆիֆ Ալ-Բիզրին, ով 1957-1958 թթ. գլխավոր շտաբի պետն էր[40]: Նրա տեղակալն Ամին Նաֆուրին էր[41], իսկ հետախուզության ղեկավարը՝ Աբդ Ալ-Համիդ Աս-Սառաջը[42]:

Բազմաթիվ սպաներ, այդ թվում նաև ալավի, ովքեր հետագայում ազդեցիկ պաշտոններ են զբաղեցրել, աղքատ ընտանիքներից էին, օրինակ՝ գեներալ-լեյտենանտ Մուհամմադ Ումրանը, Սալահ Ջադիդը և այլք: Մուհամմադ Ումրանը Հոմսի Հադդադին ցեղից էր, իսկ Սալահ Ջադիդը՝ Լաթաքիայի Խայաթին ցեղից: Աղքատ ընտանիքից էր նաև Հալեպից Ամին Հաֆեզը: Իսկ ահա Դեյր Ազ-Զորից Ջասիմ Ալվանը

---

[40] Աֆիֆ Ալ-Բիզրին ծնվել է Դամասկոսում և մասնակցել 1941 թ. Իրաքում Ռաշիդ Ալի Ալ-Ղայլանիի ապստամբությանը: 1950-1953 թթ. սովորել է Ֆրանսիայի ռազմական ակադեմիայում: 1957 թ. սկզբներին նա դարձավ բանակի կադրային կառավարման ղեկավար, այնուհետև նրան շնորհվեց գեներալ-մայորի աստիճան և նշանակվեց բանակի շտաբի պետ: Աֆիֆ Ալ-Բիզրիի ավագ եղբայրը՝ գեներալ Սալահ Ադ-Դին Ալ-Բիզրին, «Ժողովրդական դիմադրության զորքերի» (قوات المقاومة الشعبية) հրամանատարն էր, որը ստեղծվել էր 1957 թ.: 1963 թ., երբ կազմավորվեց «Ազգային գվարդիան» (حرس القومي), «Ժողովրդական դիմադրության զորքերը» և «Ազգային գվարդիան» միավորվեցին «Ժողովրդական բանակին» (جيش الشعب):

[41] Ամին Նաֆուրին քրիստոնյա էր, ով հասարակ զինվորից դարձել էր սպա, այնուհետև քաղաքական գործիչ: Աչքի ընկնելով զինվորական ծառայության ժամանակ՝ նրան ուղարկեցին ռազմական ակադեմիա և այն ավարտելուց հետո նա արդեն գումարտակ էր ղեկավարում:

[42] Հետախուզության ղեկավար գնդապետ Աբդ Ալ-Համիդ Աս-Սառաջը ծնվել է 1925 թ. Համայում, իսկ 1945 թ. ավարտել է Հոմսի Ռազմական ակադեմիան: 1956 թ. Աբդ Ալ-Համիդ Աս-Սառաջի ձեռքում էր գտնվում ոչ միայն ռազմական հետախուզությունը, այլ նաև հակահետախուզությունը և ազգային անվտանգությունը, որը թույլ տվեց նրան դառնալ Սիրիայի այդ ժամանակվա ամենաազդեցիկ մարդկանցից մեկը: Համայից էր նաև քաղաքական գործիչ Ակրամ Ալ-Հաուրանին: Նա ծնվել է 1912 թ.: Ինչպես Աֆիֆ Ալ-Բիզրին, նա նույնպես մասնակցել է 1941 թ. Իրաքում Ռաշիդ Ալի Ալ-Ղայլանիի ապստամբությանը: 1949 թ. Ակրամ Ալ-Հաուրանին պաշտպանեց Հուսնի Ազ-Զաիմի վարչակարգը: Այնուհետև մեկ տարի անց՝ Աշ-Շիշակլիի ժամանակ, նա արդեն պաշտպանության նախարարն էր: 1954 թ., նա միացրեց իր կուսակցությունը «Բաասին»:

դեռ մանուկ հասակից ինքն էր իր մասին հոգ տանում: Ռազմաօդային ուժերի հրամանատար Մուհամմադ Հասան Նասիրը նույնպես ալավի էր, ով սպանվեց 1950 թ.[43]:

Սիրիայի ներքաղաքական գործընթացներում ալավիների ակտիվ դերակատարությունը հնարավոր դարձավ հատկապես ռազմական բնագավառում վերջիններիս լայն ներգրավվածության շնորհիվ: Անկախության ձեռքբերումից հետո ազգային բանակի ձևավորման գործընթացում աստիճանաբար ավելանում էր Սիրիայի զինված ուժերում ազգային, կրոնական փոքրամասնությունների ներգրավման ցուցանիշը: Ալավիների, ինչպես նաև այլ փոքրամասնությունների համար ռազմական ոլորտն առաջընթացի, սոցիալական վիճակի բարելավման բացառիկ հնարավորություն էր: Անկախության հռչակումից հետո բազմաթիվ ալավի զինվորականներ մտան «Բաաս» կուսակցության մեջ:

Սիրիական բանակում այդ ժամանակ զենքի հնացած տեսակներ էին, որոնք մնացել էին դեռևս ֆրանսիացիներից ու անգլիացիներից: Պատերազմի շեմին, եթե այլ երկրներ ունեին տանկային կորպուսներ, ապա սիրիական բանակն ուներ ընդամենը 11 թեթև տանկ և 32 զրահամեքենա: Սպայական վերնախավը 1949-1954 թթ. մասնակցեց Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումներին, որոնք կատարվեցին Հուսնի Ազ-Զաիմի, Սամի Ալ-Հինաուիի[44] և Ադիբ Աշ-Շիշակլիի գլխավորությամբ:

---

[43] Be'eri E., նշվ. աշխ., էջ 339:

[44] Մուհամմադ Սամի Հիլմի Ալ-Հինաուին նույնպես պատկանում է սիրիական սպայական կազմի առաջին դասին: Նա ծնվել է 1898 թ. Հալեպում: Սամի Ալ-Հինաուին նույնպես քրդական ծագում ունի: 1916 թ. նա ծառայության է անցել թուրքական բանակում և 1919 թ., ավարտելով Ստամբուլի ռազմական ակադեմիան, ծառայել է Ալեքսանդրետի ոստիկանությունում: 1927 թ. ծառայության է տեղափոխվել «Հատուկ զորամասերում», իսկ ավելի ուշ՝ Սիրիայի անկախությունից հետո, մտել է սիրիական բանակ: 1948 թ. արաբ-իսրայելական պատերազմի ժամանակ Սամի Ալ-Հինաուին արդեն ուներ գնդապետի աստիճան:

HAYK SAMSONYAN
(IOS)

THE FORMATION OF THE ARMY AND ITS ROLE IN POLITICAL LIFE OF SYRIA (1916-1946)

The process on the formation of Syrian army began in the period between two World Wars. A background of the Syrian army formed the Syrian battalion of the Oriental (Armenian) Legion. The Oriental Legion, which consisted of five battalions, on 18th of January 1919 was divided into two parts: the Armenian Legion with 4 battalions and the Syrian having only 1 battalion. The number of volunteers in the Oriental Legion was nearly 5000 where 4,124 soldiers represented the Armenian battalions while 698 the Syrian one.

On 20th of March 1930 the Syrian Legion, which was additionally supplied by both "Troupes Supple´tives" and "Troupes Auxiliaires", turned into Troupes Spéciales du Levant. The "Special Troops", created by the French mandate government, were basically supplied by representatives of the faraway retarded provinces, also by national and religious minorities, for instance, the Alawites, Druzes, Ismailites, Kurds, Circassians, Armenians and others.

Under the pressure of the Syrian national forces from one side and international community from another one on 8th of July 1945 France announced officially its readiness to withdraw the "Special Troops" to Syria and Lebanon. The transfer of forces was over by the 1st of August 1945. Since that time onwards the 1st of August is the Army day in Syria. By that time the Syrian army numbered 5000, where 3,500 were policemen. A withdraw of French and English troops from Syria began on 15th of April and was over on 17th of April 1946. That day is a national holiday in Syria. After almost a quarter of century the struggle for liquidation of French mandate and creation an independent state was finally over.

In the Syrian officer corps are to be found sons of some of the most distinguished families. Fore example, the Mardam family of Damascus gave their country a prime minister as well as several officers. Abd Al-Ramhan Mardam was promoted to the rank of colonel in Husni Az-Zaim's time. At the beginning of the UAR period he retired with the rank of lieutenant-

general. Tawfiq Nizam Ad-Din who was chief of staff from July 1956 until August 1957 is a member of one of the most distinguished landowning families in the Kamishli region. From the important Al-Atasi family of Homs came two presidents of the republic and more than ten officers, including Faysal Al-Atasi, a leader of the rising against Adib Al-Shishakli in 1954, and Luay Al-Atasi, who from March to July 1963 was head of the Revolutionary Council; Jawdat Al-Atasi, who served with the military police, later became a senior officer in the civil police and ambassador to Moscow. At the other end of the scale many officers, including Alawis and Druze, come from poor families. A few of them reached high, even top military and political positions.